հովել իր ընիկ կալուածը՝ Ապահունիք նաեւ արեւմտեան կողմից, ուր ընկնում էր Տարօն նոյն Արածանի գետի հովտում. Արդ ալ Մելիք աչք է ածում Տարօնի վրայ: Բայց չի յաջողում եւ ինքն էլ զոհ է դնում իր բռնութեան:

Այստեղից հետեւում է, որ Աշոտի եւ Ջահապի մրցութիւնը՝ տիրանալու հայ երկրին, շարունակւում էր եւ ներքին խուլ մաքառումը պայթում էր երբեմն պատերազմով: Երեւում է նաեւ, որ բախտի ժպիտը Ջահապի երեսին չէր, եւ որ Աշոտ յաջողել էր տիրանալ Տարօն գաւառին:

Յաջորդ հերթական ընդհարումը Արդ ալ Մելիքի ժառանգ Սեւադայի հետ էր:

Հաշիմից յետոյ կուսակալ է դալիս Հաթիմ իբն Հարթամա իբն Այան: Քիչ յետոյ լսում է որ Մամուն ամիրապետը սպանել է իր հօրը Հարթամին: Մամուն յաղթել էր իր եղբօրը շնորհիւ պարսիկների: Նրա արքունիքում զօրացել էր պարսկական ազդային հոսանքը ընդդէմ արաբական կուսակցութեան, եւ Հարթամի մահը վերադրւում էր պարսիկ ազդեցութեան:

Սպանուածի որդին՝ Հաթիմ ապստամբեց խալիֆի դէմ, թողեց Պարտաւ քաղաքը եւ քաշուեց Վրաստան:

Հօր սպանութիւնը տեղի ունեցաւ 201 հիջրի = 816–817 թուին: Ապստամբութիւնն, ուրեմն, այս ժամանակներն էր, հաւանաբար հետեւեալ 817–818 թուին:

Հաթիմ կոչ է անում երկրի իշխաններին եւ «հայ ժողովրդի պետերին», այլ եւ բանակցութեան մէջ է մտնում Բաբիկ, հայ հեղինակների Բաբան, ադանդաւորի հետ, որ Մուռամեան կոչուած կրօնական–չարժման գլուխն անցած, սպառնում էր արաբ իշխանութեան նոր եւ վտանգաւոր ցնցումով:

Ապստամբ Հաթիմի տեղ եկաւ կուսակալութեան պաշտօնով Եահեա իբն Մուադ 204 հիջրի = 819–820 թ. քանի անգամ ճակատեց, բայց միշտ անյաջող: Օգնական զօրքով ղրկուեց խալիֆ Մամունի կողմից Իսա իբն Մուհամմադ 205 հ. = 820–821 թ. սա եւս պարտուեց եւ թողեց Արտաշատական, ուր տեղի ունեցան կռիւներ ընդդէմ Բաբիկի եւ եկաւ Հայաստան:

Այստեղ Սեւադա Իբն Արդ ալ Համիդ ալ Ջահաֆի եւս ըմբոստացած էր կենտրոնական իշխանութեան դէմ: Իսա Իբն Մուհամմադ խոստանում է նրան տալ Հայաստանի կուսակալութիւնը, միայն թէ ետ կենայ չար մտքէն: Սակայն, Սեւադա խուլ մնաց: Իսա եկաւ նրա դէմ եւ ընկճեց զէնքի ոյժով: (Եակոբի II 562 — Marquart, Streitzuge, P. 458):

Սրանից յետոյ է, որ Սեւադան ընդհարուեց Աշոտի եւ Շապուհի հետ. «Իսկ Սեւադա ոմն ի տանէ Ջահապայ չորիւք հազարօք կռուեալ ընդ Աշոտոյ եւ ընդ եղբօր իւրում Շապհոյ, մեռաւ Շապուհ ի պատերազմին եւ զկնի երկուց ամաց մեռաւ Աշոտ ի տան իւրում եւ ա՛ռ զիշխանութիւնն Սմբատ որդի նորա»:

Ասողիկի վկայութեամբ Աշոտ իշխեց քսան տարի: Աղբիւրը Շապուհ Բագրատունին է, ուրեմն, ստոյգ:

Հարուն ալ Ռաշիդ մեծ արշաւանք սկսեց Բիւզանդիայի դէմ 806 թուականին (Theorph. 6298):

Անհաւանական չէ, որ իր թիկունքը ապահովելու համար Հայաստանում իշխանութիւնը յանձնած լինի Աշոտին հէնց նոյն տարին: Այս հաշւով Աշոտ մեռած պիտի լինի քսան տարի իշխանութիւնից յետոյ 826 թուին: Նորա եղբայր Շապուհը մեռաւ երկու տարի յառաջ Սեւադայի դէմ կռուելիս, ուրեմն է՛ւ կռիւը է՛ւ մահը տեղի ունեցան 824 թուին:

Դարձեալ Ասողիկից գիտենք, որ Աշոտի որդին Սմբատ պատանդ էր գրուած խալիֆի դրան եւ վերադարձաւ հայոց 275 թուին, որ է Քրիստոսի 826: Եթէ իշխանի դարձը կապ ունի հօր մահուան հետ, ապա իրաւ է որ Աշոտ մեռել է նոյն տարին:

Որպէսզի Հարուն հիմ ունենար Աշոտին իշխանութեան կոչելու 806 թուին, պէտք է որ նա արդէն անուն հանած եւ ազդեցիկ անձն լինէր երկրում: Միայն չէր լինի ենթադրել, որ Աշոտի առաջին գործերը, մանաւանդ Ջահապի դէմ մղած կռիւը Արշարունիքի համար, յառաջ են քան 806 թիւը եւ կատարուել են, ինչպէս յիշեցինք վերեւ, Ատա հերձուածողի չարժման նպատակաւոր մթնոլորտում:

Վարդանի ասելով, Աշոտ եւ Շապուհ« հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց»: Շա-